Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Էլեկտրական ցանցին նոր սպառողի միացման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման և միացման ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով նախատեսվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տարեկան ցուցանիշների ուսումնասիրություն և համապատասխան վերլուծական տեղեկանքի կազմում:

Նախատեսվում է հաստատել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնները:

Սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու նպատակով նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2016 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն և արդյունքների ամփոփում:

Էներգետիկայի բնագավառի ազատականացմանն ուղղված բարեփոխումների արդյունքում «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը

շուկայի օպերատորի գործառույթ վերապահելու առնչությամբ նախատեսվում է իրականացնել դրանից բխող հանձնաժողովի իրավական ակտերի վերանայում:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ նախատեսվում է ներկայացնել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2018 թվականի անվանական կազմի և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունների կանխատեսումները:

Նախատեսվում է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտում հրապարակված տեղեկատվության թարմացում:

Նախատեսվում է խմելու ջրի ոլորտում ծառայություն մատուցող ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկի համաձայնեցում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ, որն ուղղված է խմելու ջրի մատակարարվող ժամերի վերաբերյալ սպառողների իրազեկմանը և ջրամատակարարման հետագա բարելավմանը: Ջրամատակարարման գրաֆիկը կհրապարակվի տպագիր մամուլում և ջրամատակարար ընկերության ինտերնետային կայքում:

Նախատեսվում է մշակել վերլուծական տեղեկանք Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ, որն ուղղված է ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը կմշակվի ՀՀ հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի գործունեության ծրագիրը և կներկայացվի ՀՀ Ազգային ժողով:

Կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կիրապարակվեն սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունները, ինչի շնորհիվ շահագրգիռ անձանց համար հնարավորություն կընձեռվի ուսումնասիրել մատակարարների կողմից սպասարկման որակի ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետությունը:

Նախատեսվում է եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչն անհրաժեշտ է նշված համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու համար:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կիրապարակվեն էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: